Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեք տանիքների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

25.09.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պողոսյան /գնահատող/, Ա. Մխիթարյան /գնահատող/
Հ. Հարությունյան /բացող/, Լ. Հայրապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ն. Մամուլյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ն. Մամուլյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ
2	«Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ
3	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
4	«Թերմոշինթել» ՍՊԸ
5	«ԳԱԳՆԱԽՇԻՆ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ն. Մամուլյան)

3.1 Բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1. Ավանեսովի փողոց հ.7/2 շենքի լանջավոր տանիքի հիմնանորոգման աշխատանքների նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր

«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	401500	135000		135000
«Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ		224000		224000
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ		250000		250000
«Թերմոշինթել» ՍՊԸ		250000		250000
«ԳԱԳՆԱԽՇԻՆ» ՍՊԸ		300000		300000

2. Գ.Մահարու փողոց հ.127 շենքի լանջավոր տանիքի հիմնանորոգման աշխատանքների նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	255500	138000		138000
«Թերմոշինթել» ՍՊԸ		180000		180000
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ		230000		230000
«ԳԱԳՆԱԽՇԻՆ» ՍՊԸ		250000		250000
«Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ		254000		254000

3. Նուբարաշենի խճուղի հ.5/2 շենքի լանջավոր տանիքի հիմնանորոգման աշխատանքների նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	401500	140000		140000
«Թերմոշինթել» ՍՊԸ		180000		180000
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ		220000		220000
«ԳԱԳՆԱԽՇԻՆ» ՍՊԸ		300000		300000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ն. Մամուլյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Թերմոշինթել» ՍՊԸ-ի և «Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ-ի.

- «Թերմոշինթել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում նշված չափաբաժինների համարները չեն համապատասխանում հրավերում նշված համարներին և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է անբավարար ու մերժվել է: Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ

հաստատված կարգի 41-րդ կետի՝ /այսուհետ՝ Կարգ/ նշված անհամապատասխանությունը ուղղման ենթակա չէ:

-«Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիայի «Հիդրոտեխնիկական» և «Էներգետիկ» ներդիրները: Համաձայն Կարգ 41-րդ կետի՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով «Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ-ին մինչև 26.09.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը: Մինչև նշված ժամկետի ավարտը անհամապատասխանությունը չշտկելու դեպքում համաձայն Կարգի 42-րդ կետի 2-րդ ենթակետի՝ հայտը հանձնաժողովի որոշմամբ կգնահատվի անբավարար և կմերժվի:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Մամուլյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 27.09.2017թ. ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ն. Մամուլյան

Անդամներ՝ ---------- Տ. Պողոսյան

---------- Ա. Մխիթարյան

---------- Հ. Հարությունյան

---------- Լ. Հայրապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան